



COUNCIL OF EUROPE  
CONSEIL DE L'EUROPE



2002թ. մայիսի 7-ին առաջին ընթերցմամբ ընդունված՝  
Հայաստանի Հանրապետության Ընտրական  
Օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին  
առաջարկություններ

ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ (ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ)  
ԵՎ

ՕՐԵՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՆԵՏԻԿԻ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՈՒՐԴ)

Փորձագետների համատեղ գնահատականը՝  
Հիմնված պարոն Ջոզեֆ Միդլթոնի (ԺՀՄԻԳ փորձագետ)  
և պարոն Բերնարդ Օուենի (Վենետիկի Հանձնաժողովի  
փորձագետ) մեկնաբանությունների վրա

Վարչավա/Ստորագրուրդ  
30-ը մայիսի, 2002թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Ամփոփում.....	
II. Հիմք.....	2
III. ԿԸՀ-ի կազմավորումն ու նրա լիազորությունները.....	3
IV. Օրենսգրքի բարելավումը .....	4
V. Ընտրացուցակներ և ընտրողների իրավունքները.....	5
VI. Ընտրության և ձայների հաշվման ընթացակարգերը.....	6
VII. Այլ խնդիրներ .....	7

2002թ. մայիսի 7-ին առաջին ընթերցմամբ ընդունված՝  
Հայաստանի Հանրապետության Ընտրական Օրենսգրքում  
փոփոխություններ մտցնելու մասին առաջարկություններ

**ՕՐԵՆՔԻ ՄԻՋՈՑՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ  
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ (ՎԵՆԵՏԻԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ, ԵՎՐՈՊԱՅԻ  
ԽՈՐՀՈՒՐԴ )  
ԵՎ ԵՎՐՈՊԱՅԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՈՒ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴՈՒ  
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ (ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ)  
ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՂ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

30-ը մայիսի, 2002թ.

## I. Ամփոփում

2002թ. մայիսի 7-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն առաջին ընթերցմամբ հաստատեց մի օրինագիծ, որով առաջարկվում է բազմաթիվ փոփոխություններ կատարել Ընտրական Օրենսգրքում (այսուհետև՝ Օրենսգիրք): Փոփոխությունների նախագծում տեղ գտած առաջարկությունները հիմնականում հարաբերականորեն փոքր ու տեխնիկական փոփոխություններ են ենթադրում գոյություն ունեցող Օրենսգրքում: Դրանք ընդգրկում են փոքր թվով դրական բարեփոխումներ, որոնցից մի քանիսն արտացոլում են Եվրոպայի Անվտանգության և Համագործակցության Կազմակերպության և Ժողովրդավարական Հաստատությունների ու Մարդու Իրավունքների Գրասենյակի (ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ), ինչպես նաև Եվրոպայի Խորհրդի Վենետիկի Հանձնաժողովի փորձագետների ավելի վաղ ներկայացրած առաջարկությունները: Նախկինում արտահայտված մտահոգությունները սակայն համապատասխան արձագանք չեն գտել, կամ մեծ մասամբ մնացել են անպատասխան:

Առանցքային խնդիրը Կետրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) ձևավորումն է, որն առայժմ չի լուծվել: Նկատի առնելով նշված հարցի ակնհայտ կարևորությունը, անհրաժեշտ է դրան անդրադարձնալ առաջին իսկ հնարավորության դեպքում: Ցանկացած փոփոխությունների

**Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Կենտրոնի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ**

կատարումը պետք է երաշխավորի, որ արդյունավետ բազմակարծություն է ապահովված ԿԸՀ անդամության շրջանակներում, և որ որևէ քաղաքական շահի կրող, լինի դա քաղաքական կուսակցություն, գործադիր իշխանության մարմին կամ այլ մեկը, վերահսկողություն կամ անկառավարելի ներգործություն չունի ընտրությունների անցկացման գործընթացի նկատմամբ:

Օրենսգրքում դրական փոփոխությունների և լրացումների օրինակներից են շրջանային ընտրական հանձնաժողովների փոխարինումը ավելի մեծաթիվ տարածքային ընտրական հանձնաժողովներով, քաղաքական կուսակցություններին ընտրական հանձնաժողովներում իրենց թեկնածուներին առաջարկելու օրենքի կասեցումը, ինչը պետք է որ նպաստի տարածքային վարչակարգի անկախությանն ու իրենց պաշտոնավարման ընթացքում ընտրական հանձնաժողովի անդամների առավել մեծ պաշտպանվածությանը:

Առաջարկված լրացումներից և փոփոխություններից մի քանիսը կարող են գործնականում բարդություններ առաջացնել՝

- Կուսակցություններն ու թեկնածուները մինիսյն 15 օր ունեն ընտրություններից հետո՝ իրենց ընտրարշավի արդյունքները ներկայացնելու համար (ներկա Օրենսգրքում այդ ժամկետը 30 օր է): Այս դրույթը պետք է ուշադիր քննության ենթարկվի, որպեսզի երաշխավորվի, որ նմանօրինակ շտապողականությունը չի վտանգի հաշվարկների ճշգրտությունը:
- Փոփոխության է ենթարկվել ընտրողների լիազորությունները ընտրատարածքներում տարբերակելու ընթացակարգը, որը սակայն դեռևս բավականին անհարմար է:
- Փոփոխությունների համաձայն, ընտրատարածքների հանձնաժողովներից այլևս չի պահանջվի համապատասխանեցնել դատարկ քվեաթերթիկների թիվը ընտրությունների ավարտին հավաքված քվեաթերթիկներին, քանի որ սա ակնհայտ հնարավորություններ է ստեղծում կեղծարարության համար:

Նախկինում արդեն առաջարկված փոփոխություններից և լրացումներից մի քանիսը, որոնք անկասկած կմեծացնեն ընտրությունների թափանցիկությունը, հավասարություն կապահովվեն թեկնածուների միջև և կնպաստեն քվեատուփի անվտանգության մեծացմանը, չեն ընդունվել: Դրանցից են՝

- երաշխիքներ, որ թեկնածուի կամ կուսակցության գրանցումը չի կարող խոչընդոտվել, բացառությամբ Օրենսգրքի լուրջ խախտումների դեպքերի, համապատասխան լավ սահմանված չափանիշների:
- մեխանիզմներ, որոնք կօգնեն նվազեցնել զուտ գործնական պատճառներով ընտրություններին մասնակցել չկարողացողների թիվը՝

*Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի խորհրդի Կենտրոնիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ*

նկատի առնելով վաղ, հավատարմատարի, մոբիլ կամ հատուկ ընտրության այլ ձևերի բացակայությունը:

- պահանջ, որ գլխավոր ընտրական հանձնաժողովները պատրաստեն և ներկայացնեն ընտրությունների արդյունքների լրիվ բաշխվածությունը նախորդ, իրենցից ցածր ընտրական հանձնաժողովից, ցույց տվող աղյուսակ:
- և թեկնածուներին օժանդակելու համար հավաքվող ստորագրությունների տարբերակման հստակ ընթացակարգեր ու չափանիշներ:

Այս գնահատականի նպատակն է առավել բարելավել և ուժեղացնել Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների օրենսդրական հիմքը: Այնուհանդերձ, ընտրությունների որակը բարելավելու բանալին Օրենսգրքի արդար կիրարկումն է: Առանց նման քաղաքական նվիրումի, նույնիսկ լավագույն Օրենսգիրքը կարող է տապալվել: Այս առումով հավասարապես պարզ է, որ Օրենսգրքի բարելավումները պետք է զուգակցվեն դատաիրավական համակարգի անկախությունն ու հեղինակությունը մեծացնելու էական ջանքերով:

## II. ՀԻՄՔ

Օրենսգիրքը ղեկավարում է պետական և տեղական կառավարման մարմինների բոլոր ընտրությունները: Ընդհանուր առմամբ, այն կանոնակարգերի համապարփակ և միավորված ամբողջություն է, որն ամուր հիմք է ծառայում ընտրությունների անցկացման համար: Սակայն այն կարելի է բարեփոխել բազմաթիվ ոլորտներում: 1999թ. ազգային ընտրություններից ի վեր շարունակական վիճաբանություններ և քննարկումներ էին ծավալվում Օրենսգրքի շուրջը՝ թե դրա ընդհանուր դրույթների և թե ընտրությունների հատուկ տեսակների վերաբերյալ:

2001թ. փետրվարին, Պետական և իրավական հարցերով խորհրդարանական հանձնաժողովը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը և ԵԱՀԿ-ն (Երևանյան գրասենյակն ու ԺՀՄԻԳ-ը) կլոր սեղան կազմակերպեցին Օրենսգրքում վերոնշյալ և այլ փոփոխություններ ու լրացումներ կատարելու վերաբերյալ: Այդ ժամանակից ի վեր Օրենսգրքում կոնկրետ լրացումների մասին առաջարկությունների մշակումը բավականին դանդաղ է ընթացել:

Սույն փաստաթուղթն անդրադառնում է այն լրացումներին ու փոփոխություններին, որոնք առաջարկվել էին օրենքի նախագծում, որն առաջարկվել էր Ազգային ժողովի 16 պատգամավորների նախաձեռնությամբ: Առաջարկված բոլոր փոփոխություններն ու լրացումները, բացառությամբ Հոդված 23-ի, որը վերաբերում է

*Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Վենետիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ*

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կազմավորմանը, ընդունվել էին 2002թ. մայիսի 7-ին առաջին ընթերցմամբ:

Նշված զեկույցում տեղ գտած մեկնաբանությունները հիմնականում քննարկվել են 2002թ. մայիսի 16-17-ը Երևանում կազմակերպված կլոր սեղանի ժամանակ, Օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին օրենքի երկրորդ ընթերցումից առաջ: Կլոր սեղանը կազմակերպվել էր ԵԱՀԿ Երևանի գրասենյակի, Երևանում Եվրոպայի Խորհրդի ներկայացուցչության և Միջազգային Հարաբերությունների Ազգային ժողովրդավարական Ինստիտուտի, ինչպես նաև ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ և Եվրոպայի Խորհրդի Վենետիկի Հանձնաժողովի ջանքերով: ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ և Վենետիկի Հանձնաժողովի փորձագետները, որոնք մասնակցեցին երկու կլոր սեղաններին, միասնական ջանքերով մշակել են սույն գնահատող փաստաթուղթը:

### **III. ԿԸՀ ձևավորումն ու նրա լիազորությունները**

Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի թիվ 23-րդ Հոդվածով ներկայացվում է Օրենսգրքի Հոդված 35-ի նոր տարբերակ: Չնայած որ այս հոդվածն ըստ էության չէր հաստատվել առաջին ընթերցմամբ, այն կարգավորում է հիմնովին կարևոր և նուրբ մի խնդիր, ուստի պահանջում է խորն (հետևողական) ուշադրություն :

Փոփոխության օրինագիծն առաջինը կարգավորում է թե ԻՆՉՊԵՍ պետք է ստեղծվի Կենտրոնական Ընտրական Հանձնաժողովը: Նախքան առաջարկությունները քննարկելը, կարևոր է մտապահել այն փաստը, որ ընդհանրապես հանձնաժողովների և մասնավորապես ընտրական Հանձնաժողովի կազմավորումը պետք է կառավարվի հետևյալ սկզբունքներով՝

- Ընտրությունների ընթացքով շահագրգռված ոչ մի կողմ՝ Նախագահ, Կառավարություն, Խորհրդարանական խմբավորումներ կամ այլուք, չպետք է վերահսկողություն կամ անսահմանափակ ներգործություն ունենան ԿԸՀ նկատմամբ:
- ԿԸՀ-ն և այլ ընտրական հանձնաժողովները պետք է գործեն անկանխակալորեն և անկախ լինեն Կառավարության գործադիր իշխանությունից:
- Ընտրություններին թեկնածուներ առաջադրած քաղաքական կուսակցությունները, որոնք ներկայացուցիչ չունեն ԿԸՀ-ում, պետք է ունենան խորհրդատվական ձայն:
- ԿԸՀ ձևավորման համակարգը պետք է լինի թափանցիկ:
- ԿԸՀ անդամները պետք է ունենան համապատասխան գիտելիքներ և փորձ:

*Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Վեներտիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ*

- ԿԸՀ աշխատանքի կայունությունն ու շարունակելիությունը պետք է երաշխավորվի:

Ներկայում Օրենսգրքի 35-րդ Հոդվածը սահմանում է ԿԸՀ կազմավորման մի համալիր բանաձև: Երեք անդամները նշանակվում են Կառավարության կողմից: առնվազը 30000 ստորագրություն հավաքած կողմերից յուրաքանչյուրը, որը խմբավորում ունի գոյություն ունեցող կամ կազմալուծված Խորհրդարանում ունի մեկ անդամ նշանակելու իրավունք: Եվ վերջապես համամասնական ընտրություններին մասնակցելու առնվազը 30000 ստորագրություն հավաքած, բայց Խորհրդարանում խմբավորում չներկայացնող առաջին հինգ կուսակցություններից յուրաքանչյուրն իրավունք ունի նշանակելու մեկ անդամի: Այսպիսով՝ ԿԸՀ ձևավորման գոյություն ունեցող համակարգը բարդ է (հարմար չէ): այն բազմակարծություն է ապահովում՝ ընդգրկելով Կառավարությանը, Խորհրդարանական կուսակցություններին և Ազգային ժողովում չներկայացված կուսակցություններին:

Ի տարբերություն վերոնշյալի, Փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի տարբերակի (առաջարկի) 23-րդ Հոդվածը, որը ներկայում ընդամենը օրինագիծ է, հետ քայլ է: Այն նշում է, որ Խորհրդարանի յուրաքանչյուր խմբավորում կնշանակի մեկ անդամի, իսկ Նախագահը (նախորդ տարբերակում՝ Կառավարությունը) կնշանակի մեկ թվով պակաս անդամների: Սա առավել մեծ իշխանություն կտար Կառավարության գործադիր իշխանությանը ԿԸՀ նկատմամբ՝ գոյություն ունեցող կանոնների համեմատությամբ: Սա իրական ռիսկ է ստեղծում, որ ընտրությունները կարող են իրականացվել կամ առնվազը կարող է ընկալվել, թե դրանք իրականացվում են կողմնակալորեն՝ տվյալ ժամանակահատվածի Կառավարության շահերից ելնելով: Նշված դեպքերից յուրաքանչյուրի պարագային ընտրություններ արդյունքների լեգիտիմությունը, ինչպես նաև ընտրությունների ընթացքի նկատմամբ հանրային վստահությունը կվտանգվի: Ուստի խիստ հանձնարարելի է, որ ընդունվի բազմակարծության մոտեցումը, որը գործադիր իշխանությանը գերակշռող ներգործություն չի ապահովի ընտրությունների կազմակերպման համատեքստում:

Եթե փոփոխությունների և լրացումների մասին օրինագծի 23-րդ հոդվածի բանաձևն ընդունվելու է, ապա գործադիր իշխանության աղեցությունը կարելի է հավասարակշռել գործադիր իշխանության կողմից նշանակվող թեկնածուների թվի նվազեցմամբ և (կամ) նրանց թեկնածության առաջադրման մեխանիզմում փոփոխություններ մտցնելու միջոցով: Միջոցներից մեկը կարող էր լինել անկախ վերահսկող մարմնի ստեղծումը, որն էլ հենց կառաջարկեր մի քանի թեկնածուների գործադիր իշխանությանը, որից վերջինը կարող էր ընտրել սահմանված թվով անձանց: Կամ ընդհակառակը, գործադիր իշխանությունը կարող էր

**Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Կենտրոնի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ**

Թեկնածուներ առաջադրել վերոնշյալ անկախ վերահսկող մարմնին, որն էլ կատարեր ընտրությունը: Սա կարող էր նաև օգնել ավելի մասնագիտացված դարձնել ԿԸՀ անդամակցությունը:

Փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 23-րդ հոդվածը նաև անդրադառնում է այն հարցին, թե ԵՐԲ պետք է կազմավորվի ԿԸՀ-ն: Այն նախատեսում է, որ ԿԸՀ-ն կկազմավորվի ընտրություններից ոչ թե առաջ, այլ դրանցից 40 օր հետո: (Նկատի ունենալով այն առանցքային դերը, որ Ազգային ժողովը խաղում է ԿԸՀ անդամների նշանակման հարցում, ակնհայտ տրամաբանության կա, որ ԿԸՀ-ն կազմավորվի Խորհրդարանական ընտրություններից հետո): Փոփոխություններ կատարելու մասին օրինագծում տեղ գտած այս առաջարկությունը ողջունելի է՝ այն արտացոլում է ընտրություններից անմիջապես առաջ, հապշտապ նոր ընտրական հանձնաժողովներ կազմավորելու անցանկալիությունը: Նման օրինակ մոտեցումը խոչընդոտում է ընտրական հանձնաժողովների անխափան աշխատանքն ու արդյունավետությունը:

Այնուհանդերձ, ընտրություններից հետո 40 օրվա ընթացքում ԿԸՀ ձևավորումը կարող է երկու գործնական խնդիր առաջ բերել: Առաջինը, նկատի ունենալով այն փաստը, որ անդամներին նշանակելու իրավունքը վերապահված է նորընտիր Ազգային ժողովին, ապա պարզ չէ, թե արդյոք 40 օրը բավարար կլինի նշված խմբավորումների ձևավորման և նրանց կողմից թեկնածուների առաջադրման համար: Երկրորդ, Օրենսգրքի Հոդված 41(3)-ը (որին վերջին փոփոխությունները չեն առնչվում) պահանջում է, որ ԿԸՀ նախագահը ընտրությունների վերաբերյալ զեկույց ներկայացնի դրանցից 90 օր անց: Խիստ ցանկալի է, որ նշված զեկույցը ներկայացնի այն ԿԸՀ նախագահը, որն անց է կացրել ընտրությունները, և ոչ թե նորընտիր ԿԸՀ նախագահը: Ուստի, հավանաբար տրամաբանական կլիներ կազմավորել նոր ԿԸՀ-ն միայն այն ժամանակ, երբ նախորդ հանձնաժողովն ավարտած լինի իր աշխատանքը:

Նախորդ ընտրությունների ժամանակ լուրջ մտահոգություններ կային կապված այն բանի հետ, որ չի կիրարկվում գոյություն ունեցող ընտրական օրենսդրությունը: Խիստ հանձնարարելի է, որ ԿԸՀ-ի պարտականությունների մեջ մտնի յուրաքանչյուր ազգային ընտրության ժամանակ Օրենսգրքի խախտումների վերաբերյալ վերլուծությունների, Օրենսգիրքը ոտնահարողների նկատմամբ և իրենց իրավունքների ոտնահարմանն արժանացածների համար կիրառելի միջոցառումների, ինչպես նաև անհրաժեշտ օրենսդրական բարելավումների ներկայացումը:

Օրենսգիրքը պետք է նաև հստակ սահմանված ժամկետներ մատնանշի, որոնց շրջանակներում ԿԸՀ-ն պետք է ընդունի տարբեր ընթացակարգեր, որոնք թելադրում է ընտրությունների ընթացքը:



#### IV. Օրենսգրքի բարելավումը

Օրենսգրքում առաջարկված փոփոխություններից և լրացումներից շատերը ավելի շուտ տեխնիկական բնույթ ունեն, քան գոյություն ունեցող կանոնների էական փոփոխություններ են ենթադրում: Նման փոփոխություններից և լրացումներից են՝

- Հոդված 33-ում առաջարկված փոփոխությունը ավելացնում է հետապնդումներից ԿԸՀ անդամների պաշտպանվածությունը ԿԸՀ գործունեության ժամանակահատվածում :<sup>1</sup> Այս փոփոխությունն արտացոլում է ԿԸՀ հանձնարարականն ու հաստատվել է նախորդ փորձագիտական գնահատող փաստաթղթերում: Գոյություն ունեցող 11 ռեգիոնալ հանձնաժողովները կփոխարինվեն 37 տարածքային ընտրական հանձնաժողովներով՝ յուրաքանչյուրը մեկ մանդատ ունեցող ընտրատարածքի համար: Նշված բարեփոխումն անդրադառնում է այն մտահոգություններին, որ ռեգիոնալ հանձնաժողովները խիստ ծանրաբեռնված էին աշխատում՝ հատկապես Երևանում, և որ դրանք ենթակա էին ռեգիոնալ (մարզային) կառավարիչների միջամտությանը:
- Օրենսգրքի 38-րդ հոդվածը կփոփոխվի՝ քաղաքական կուսակցություններին թույլ չտալով ընտրական հանձնաժողովներից իրենց անդամներին հետ կանչել: Սա պետք է որ օգնի ապաքաղաքականացնել ԿԸՀ աշխատանքը և խրախուսել կուսակցությունների նշանակած անձանց հարաբերականորեն անկողմնակալ աշխատանքային ոճ որդեգրելու առումով:
- 24-րդ Հոդվածում առաջարկվող փոփոխությունը, ԿԸՀ հանձնարարականին համահունչ՝ պարզաբանում է այն ընթացակարգը, որով բաշխվում է ընտրությունների վարչարարության նպատակով նախատեսված պետական ֆինանսավորումը:<sup>2</sup>
- 26-րդ հոդվածում առաջարկված փոփոխությունը պահանջում է, որ ԿԸՀ-ն անդրադառնա վերահսկման ընթացքում բացահայտված և դատարան ներկայացված բոլոր օրինախախտումներին առաջին հերթին, ինչի նպատակը հավանաբար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելն է:<sup>3</sup> Օրենսգիրքը պետք է պարզաբանի, թե արդյոք ԿԸՀ-ն հիմքեր ունի նման ձևով վարվելու, և որտեղից են ծագում այդ հիմքերը:

---

1 Փոփոխությունների մասին օրինագծի 22-րդ հոդվածը:

2 Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 15-րդ հոդվածը

3 Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 17-րդ հոդվածը

## V. Ընտրացուցակներ և ընտրողների իրավունքները

Ճշգրիտ ընտրացուցակներ պահելը դեռևս շատ լուրջ խնդիր է, որի պատճառներից ամենամեծը թերևս Հայաստանից արտագաղթի և Հայաստան ներգաղթի բարձր տոկոսն է: Այս խնդիրը լուծելու նպատակով անհրաժեշտ է մշակել ընտրողներին գրանցելու համապատասխան ընթացակարգեր, և այս դրույթներն այնուհետև ճիշտ կիրարկել: Արդյունավետության դեպքում տարեկան մեկ անգամ ընտրացուցակների վերանայումը, Օրենսգրքում ներկայում մատնանշված տարեկան երկու անգամի փոխարեն, բավարար կլինի:

Որոշ կասկածներ կան կապված այն բանի հետ, թե արդյոք զինապարտներին կթույլատրվի քվեարկել համամասնական ընտրություններում թե՛ այն ընտրատարածքում, որտեղ անցնում են զինվորական ծառայություն, և թե՛ իրենց բնակավայրին համապատասխան ընտրատարածքում: Նման դեպքում կրկնակի քվեարկելու իրավունքը չէր արդարացվի, ուստի վերոնշյալ հարցի լուծման համար անհրաժեշտ է պարզաբանումներ մտցնել:<sup>4</sup> Ընտրական հատուկ ընթացակարգերի բացակայության պարագային (փոստով ընտրություն, վստահված անձի միջոցով ընտրություն, և այն) պարզ չէ, թե ինչպես են զինապարտները կարողանալու մասնակցել որևէ ընտրության իրենց բնակավայրին համապատասխան ընտրատարածքում, երբ հիմնականում նրանք իրենց զինծառայությունն անց են կացնում տանից հեռու:

Հոդված 14-ը փոփոխության է ենթարկվել, որի համաձայն ընտրողները ոչ ուշ քան ընտրություններից յոթ օր առաջ, և ավելի շուտ հինգ օրվա ընթացքում, պետք է դիմեն ընտրացուցակներում տեղ գտած վրիպումները շտկելու համար:<sup>5</sup> Համապատասխանաբար կպահանջվեր փոփոխություն մտցնել հոդված 10(1)-ում: Հոդված 14(1)-ից «ընտրացուցակներում ընդգրկվելու կամ դրանցից դուրս գալու համար Դուք կամ այլ քաղաքացիները» բառերը ջնջելը զարմացնում է: Արդյոք սա նշանակում է, որ «բացթողումներ» բառը չպետք է օգտագործվի ընտրացուցակում սխալմամբ գրանցված ընտրողների անունների առնչությամբ:

## VI. Ընտրությունների և ծայների հաշվառման գործընթացը

Յրենսգիրքը որևէ դրույթ չունի հատուկ ընտրական ընթացակարգերի, ինչպես վաղ, վստահված անձի միջոցով, մոբիլ, փոստային կամ այլ

---

<sup>4</sup> Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 5(b) հոդվածը

<sup>5</sup> Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 9-րդ հոդվածը:

**Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Կենտրոնի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ**

արտակարգ ընթացակարգերն են: Նմանօրինակ ընթացակարգերը դուրս են թողնվել ընտրական օրենսդրությունից այն ժամանա, երբ 1999թ. ընդունվում էր սույն Օրենսգիրքը՝ կեղծարարությունները նվազեցնելու նպատակով: Այնուհանդերձ, անհակադարձելի էր այն, որ մեծ թվով ընտրողներ ներկայում լիովին դուրս են մնացել գոյություն ունեցող ընթացակարգից՝ կորցնելով իրենց ամենահիմնավոր քաղաքական իրավունքներից մեկը: Խիստ ցանկալի է, որ գտնվեն այնպիսի մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր լինի նշված պատճառով ընտրություններից դուրս մնացողների թիվը նվազեցնել: Անհրաժեշտ է հիշել, որ կան կեղծարարությունների դեմ պայքարելու բազում միջոցներ՝ հատուկ ընտրական ընթացակարգերից յուրաքանչյուրի պարագային: Օրինակ, երբ օգտագործվում է մոբիլ ընտրությունների եղանակը, ապա խիստ վերահսկողություն պետք է սահմանվի թողարկված քվեաթերթիկների թվի նկատմամբ, ինչպես նաև երաշխավորվի ընտրական գործընթացը վերահսկող դիտորդների և այլ ներկայացուցիչների մասնակցությունը, ինչպես նաև այլ միջոցներ, որոնք կօգնեն նվազեցնել կեղծարարության հնարավորությունները:

Օրենսգրքի 49(4)-րդ հոդվածում նշված է, որ թեկնածուների անունները քվեաթերթիկի վրա պետք է մատնանշվեն այբբենական ցանկով, չնայած որ ոչինչ նշված չէ համամասնական ընտրություններում առաջադրված կուսակցությունների վերաբերյալ: Հոդված 49(4)-ը ներկայում ջնջվել է:<sup>6</sup> Արդյունքում, ընտրացուցակում թեկնածուների և (կուսակցությունների) հերթականության հարցը մնում է անպատասխան:

Հոդված 56-ը սահմանում է քվեաթերթիկների բաց թողման ընթացակարգերը: Առաջին քայլը ընտրողի համար իր ինքնության ներկայացումն է: Այնուհետև ինքնության վերաբերյալ մանրամասները ստուգվում են ընտրացուցակով: Ընտրողը ստորագրում է ցուցակում (և հենց այս եղանակով էլ գրանցվում է) և ստանում է քվեաթերթիկ: Այնուհետև քվեաթերթիկը կնքվում է ընտրական հանձնաժողովի մեկ այլ անդամի կողմից: Հոդված 56(2)-ը ենթարկվել է փոփոխությունների, որոնց արդյունքում հանձնաժողովի «այդ մեկ այլ անդամը» նույնպես պետք է հաստատի, որ ընտրողը գրանցված է տվյալ ընտրատարածքում:<sup>7</sup> Սա ոչ անհրաժեշտ կրկնապատիկ աշխատանք է, որը զգալիորեն կդանդաղեցնի ընտրական գործընթացը: Այնուհանդերձ, կա Հոդված 57(4)-ի մի ողջունելի փոփոխություն, հանձնաժողովի անդամից այլևս չի պահանջվում վերստուգել ընտրողի ինքնությունը հաստատող փաստաթուղթը և հաստատել նրա ընտրության իրավունքը անմիջապես քվեաթերթիկը քվեատուփի գցելուց առաջ:<sup>8</sup>

6 Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 32(a) հոդվածը  
7 Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 34(a) հոդվածը  
8 Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 35(b) հոդվածը

**Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Վենետիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ**

Հոդված 57-ը ղեկավարում է այն ընթացակարգը, որով լրացվում են քվեաթերթիկները: Փոփոխություններն ու լրացումները խոսում են այն մասին, որ ընտրողները պարտավոր են լինելու ԿԸՀ կողմից սահմանված հատուկ նշաններ: Այս բարեփոխման անհրաժեշտությունը ծագել էր կեղծարարության հատուկ տեսակի առկայության պատճառով, որի ժամանակ ընտրողները համաձայնում են հատուկ նշաններ օգտագործել թեկնածուներին կողմ քվեարկելիս՝ դրամական փոխհատուցում ստանալու պայմանով: Թեկնածուն և նրա ներկայացուցիչները կարող են այնուհետև քվեաթերթիկների գնման ընթացքում ստուգել, թե արդյոք ընտրողների հետ պայմանավորվածությունը չի խախտվել: Նշված փոփոխության էությունն այն է, որ ընտրողներին միևնույն նշանն օգտագործելու պահանջի արդյունքում նման կեղծարարությունները կդադարեն: Չնայած որ սա հասկանալի արձագանք է, այնուամենայնիվ այս հարցին պետք է ավելի զգույշ մոտենալ: Իրական վտանգ կա, որ քվեաթերթիկների լրացման գործընթացը շատ ավելի կդանդաղի և կդառնա երկարատև, քանի որ ձայներ հաշվողները, վստահված անձինք ու թեկնածուների ներկայացուցիչները կսկսեն վիճաբանել այն հարցի շուրջ, թե արդյոք քվեաթերթիկների վրայի նշանները վավերական են թե ոչ: Եթե պետք է օգտագործվի ստանդարտ նշան, ապա այն պետք է շատ պարզ լինի (օրինակ՝ «x»): Պետք է շարունակել կիրարկել ընդհանուր կանոնը, որի համաձայն, քվեաթերթիկը վավերական է, եթե ընտրողի մտադրությունն ակնհայտ է և հստակ: Բացի այդ, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն բանին, որ քվեախցում լինի թանաք և ստանդարտ նշանի ռետինե դրոշմ:

Հոդված 60(4)(1)-ը և Օրենսգրքի մյուս դրույթները փոփոխությունների և լրացումների են ենթարկվել քվեաթերթիկների հաշվման գործընթացի առումով: Նախկին կանոնների համաձայն կարևոր հանգամանք էր բաց թողնված քվեաթերթիկների և քվեատուփում գտնվող քվեաթերթիկների ու քվեարկությանը չմասնակցած քվեաթերթիկների համեմատությունը: Այս կանոնը այժմ փոխվել է, և համեմատվում են ընտրատարածքի հանձնաժողովի կողմից ընտրություններից առաջ ստորագրված քվեաթերթիկների և քվեատուփի ու քվեարկությանը չմասնակցած քվեաթերթիկների թիվը:<sup>9</sup> Նման փոփոխության արդարացումը բնավ պարզ չէ, և իրական մտահոգություններ է առաջացնում քվեաթերթիկների շուրջ: Ընտրատարածքի հանձնաժողովը պետք է պատասխանատու լինի իր ստացած բոլոր քվեաթերթիկների համար, և ոչ թե միայն այն քվեաթերթիկների համար, որոնք ստորագրվել են նախքան ընտրությունների սկսելը: Եթե ինչ-ինչ պատճառներով ընտրատարածքի հանձնաժողովը ստանա ավելի քիչ (կամ ավելի շատ) քվեաթերթիկներ, քան պետք է ստանար, ապա այդ փաստը պետք է անմիջապես

<sup>9</sup> Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 36(c) և այլ հոդվածներ the draft amendments.

*Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Վենետիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ*

արձանագրվի և դրա մասին զեկուցվի քվեաթերթիկներ թողարկող պատասխանատու մարմին: Նոր ընթացակարգերը լուրջ վտանգ են ստեղծում, քանի որ քվեաթերթիկները կարող են անհետանալ ընտրատարածք տեղափոխման և ստորագրման երկու գործողությունների միջակայքում, և ոչ ոք պատասխանատվություն չի կրի դրա համար:

Արձանագրության կազմման կարգը քիչ բան է տալիս թափանցիկության առումով, եթե գլխավոր ընտրական հանձնաժողովներից չի պահանջվում շտապ հրապարակել նախորդ ընտրական հանձնաժողովից ստացված արդյունքների ամփոփիչ աղյուսակը: Նման աղյուսակները պետք է յուրաքանչյուր գլխավոր հանձնաժողովի արձանագրությունների անբաժանելի տարրը լինեն: Դրանք բոլոր կուսակցություններին, թեկնածուներին և դիտորդներին հնարավորություն կտան խաչաձև համեմատություն անցկացնել ընտրատարածքների և տարածքային ու ԿԸՀ արձանագրությունների միջև: Այս առումով, խիստ ցանկալի է, որ ընտրատարածքների լրիվ արձանագրությունները հրապարակվեն կամ տարածքային հանձնաժողովների և կամ ԿԸՀ, իսկ ավելի նախընտրելի է դրանց բոլորի կողմից:

## VII. Այլ հարցեր

Յրենսգրքի 25-րդ հոդվածը փոփոխվել է՝ անկախ աուդիտին ընտրարշավի արդյունքների տրամադրման ժամկետները նվազեցնելով 30-ից մինչև 15 օր:<sup>10</sup> Այս փոփոխությունը պետք է կիրարկել միմիայն այն դեպքում, եթե հնարավոր է արդյունավետություն ապահովել սահմանափակ ժամկետներում: Անշուշտ որոշակի արժեք կա վերոնշյալ հաշվման աշխատանքների արդյունքները արագ ստանալու մեջ, սակայն չա չպետք է արվի որակի և ճշգրտության հաշվին:

Հոդված 27-ը փոփոխվել է՝ մատնանշելով, որ բողոքներ կարող են ներկայացվել թեկնածուների վստահված անձանց կողմից:<sup>11</sup> Արժեք նշել, որ նման բողոքները ներկայացվում են ոչ թե վստահված անձի, այլ թեկնածուի անունից:

Գոյություն ունեցող Օրենսգրքի Հոդված 56(5)-ի առաջին նախադասության մեջ ասվում է, որ ընտրողներն իրավունք չունեն հայտարարելու, թե ում են կողմ կամ դեմ քվեարկել: Երկրորդ նախադասությունը մարդկանց արգելում է մյուս ընտրողներից հարցնել, թե ում են նրանք ընտրել: Վերջին դրույթը

<sup>10</sup> Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 16 հոդվածը

<sup>11</sup> Օրենքում փոփոխություններ մտցնելու մասին օրինագծի 20(a) հոդվածը

**Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի Խորհրդի Վենետիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ**

թերևս արդարացի է այն իրավիճակներում, երբ ընտրողները նեղվում են նման հարցերից: Առավել դժվար է արդարացնել առաջին դրույթը: որն ակնհայտորեն ոտնահարում է ազատ արտահայտվելու ընտրողի իրավունքը: Ուստի զարմացնող է, որ փոփոխությունների պարագային վերոնշյալ դրույթը ոչ թե հանվել է, այլ ավելի ընդարձակվել՝ ընտրատարածքում կամ դրա շրջակայքում ընտրողները չպետք է հայտարարեն, թե ում են ընտրել կամ ընտրելու: Նման կանոնը սահմանափակում է ընտրողի ազատ արտահայտվելու իրավունքը, ուստի չի արդարացվում: Նման սահմանափակումը անպայմանորեն չի բխում շատ ընտրական օրենքներից հատուկ այն սահմանափակումից, որն արգելում է կարծիքի հարցում անցկացնել ընտրությունների օրը:

Փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրինագծի հոդվածներ 36(a)-ի և 39(d)-ի տեքստը թերի և սխալ է: Պարզ չէ նաև, թե ինչ է նշանակում Հոդված 53(d)-ն: Հայտի չէ, թե արդյոք տեքստը պարզաբանվել է այն ժամանակ, երբ փոփոխությունները հաստատվել են մայիսի 7-ին:

Նախկինում սահմանված շատ խնդիրների վերոնշյալ փոփոխություններն ու լրացումները չեն անդրադարձել, և դրանց թվում՝ Օրենսգրքում տեղ գտած՝ հանրաքվեի կանոնակարգման ներածությունը: Հաշվի չեն առնվել նաև հետևյալ առաջարկությունները (հանձնարարականները)՝

- Թեկնածուի կամ ցուցակի գրանցումը չպետք է կասեցվի, եթե դրա համար չկան Օրենսգրքի լուրջ խախտումներ արձանագրող հստակ սահմանված հիմքեր:
- Օրենսգրքում պետք է նշվի թեկնածուների համար հավաքված ստորագրությունները տարբերակելու ընթացակարգը:
- Օրենսգրքի 31-րդ Գլուխը, որն անդրադառնում է Օրենսգրքի խախտումների համար առկա պատասխանատվություններին, վերանայման կարիք ունի: Խախտումներից մի քանիսը բավականին աղճատված են սահմանված (ինչպես օրինակ՝ «ընտրողի կամքի ազատ արտահայտմանը խոչընդոտելը» և «ընտրական գործընթացները խոչընդոտելը»), ուստի ենթակա են շահարկման կամ դատական մեկնաբանության:
- Բողոքների և դիմումների հետ վարվելու կարգը լավ չեն սահմանված Օրենսգրքում և շատ բարդ են: Առաջարկվում է, որ ներկա Օրենսգրքի 40.1-րդ հոդվածը նորից գրվի՝ ներկայացնելով բողոքների և դիմումների հետ վարվելու ընդհանուր կարգը, և որ բողոքներին ու դիմումներին վերաբերող բոլոր դրույթները համախմբվեն Օրենսգրքի մեկ Գլխում:

Խիստ հանձնարարելի է, որ վերոնշյալ առաջարկները վերանայվեն՝ Օրենսգրքում ընդգրկվելու նպատակով:

Ի լրումն վերոնշյալի, Վենետիկի Հանձնաժողովի փորձագետը կուզենար ուշադրություն հրավիրել Ազգային ժողովում համամասնական և

*Առաջին ընթերցմամբ ընդունված՝ Ընտրական օրենսգրքում փոփոխություններ մտցնելու  
մասին առաջարկությունների համատեղ գնահատականը  
Եվրոպայի խորհրդի Վենետիկի Հանձնաժողով և ԵԱՀԿ-ԺՀՄԻԳ*

մեծամասնական տեղերի հարաբերակցության խնդրին: Չնայած որ սա 2002թ. մայիսի 7-ին առաջին ընթերցմամբ ընդունված փոփոխությունների և լրացումների համատեքստից դուրս է, և չի քննարկվել մայիսի 16-17 կազմակերպված Կլոր Սեղանին, Վենետիկի Հանձնաժողովի փորձագետը այս հարցը կարևոր է համարում: Նրա կարծիքով ներկայիս 75 մեծամասնական և 56 համամասնական տեղերի հարաբերակցությունը պետք է պահպանել, և Ընտրական Օրենսգիրքը պետք է փոփոխվի՝ հակադարձելով 2000թ. դեկտեմբերին ընդունված այն փոփոխությունը, որի համաձայն 2003թ. հունվարի 1-ից նախատեսվում է 94 համամասնական և 37 մեծամասնական տեղերի հարաբերակցություն: Կայունության ապահովման տեսակետից Վենետիկի Հանձնաժողովի փորձագետը նաև խորհուրդ է տալիս ընտրական համակարգում հաճախակի փոփոխություններ չմտցնել:

Հետևելով ԺՀՄԻԳ քաղաքականությանը, որի համաձայն ընտրական համակարգերը միջազգային պարտավորություններին և չափանիշներին ենթակա չեն, ԺՀՄԻԳ փորձագետն այս առումով որևէ առաջարկություն չի ներկայացնում: